ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1844-Ա « 08 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով՝

1. Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ», «Երևանի Ավան համայնքի թիվ 1 գրադարան», «Թիվ 5 գրադարան», «Թիվ 6 գրադարան», «Թիվ 40 գրադարան», «Օքրո Օքրոյանի անվան թիվ 3 գրադարան», «Թիվ 10 գրադարան», «Թիվ 11 գրադարան», «Թիվ 25 գրադարան», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N 22 գրադարան, «Գրադարանային համակարգ», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարան», «Թիվ 34 գրադարան», «Երևանի հ.16 գրադարան», «Երևանի Շ. Կուրղինյանի անվան հ.17 գրադարան», «Երևանի հ.18 գրադարան», «Երևանի հ.32 գրադարան» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի կենտրոնացված գրադարանային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հհ. 1 - 36 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակահատվածի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հետ համաձայնեցնելուց հետո,

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ